

Էդիտա Գ. Գզոյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԿԱՐԵՆ ԵՊՊԵՆ ԵՎ ՀԱԼԵՊԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԸ

Ազգերի լիգայի արխիվի փաստաթղթերում\*

**Բանալի բառեր** – Հայոց ցեղասպանություն, երեխաների բռնի տեղափոխում, Ազգերի լիգա, Հալեպի փրկության տուն, Կարեն Եպպե, մարդասիրական օգնություն, հայ կինը և ցեղասպանությունը, ականատեսների վկայություններ:

### Մուտք

«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածը, սահմանելով ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ իրականացվող գործողությունների տեսակները, դրանց թվին է դասում նաև «ե. երեխաների բռնի տեղափոխումը<sup>1</sup> մարդկային մի խմբից մյուսը»<sup>2</sup>:

Երեխաների բռնի տեղափոխումը մի խմբից մյուսը ցեղասպանության իրականացմանն ուղղված հինգ գործողություններից մեկն է, որը հավասարապես նշված է կոնվենցիայի մեջ՝ խմբի անդամների ֆիզիկական ոչնչացմանը և մանկածնությունը կանխելուն միտված միջոցների կողքին: Ու թեև Ցեղասպանության կոնվենցիայի 2 (ե) կետը չի տալիս երեխայի տարիքային սահմանումը, սակայն ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով երեխա է համարվում մինչև 18 տարեկան անձը:

Քանի որ հոդված 2 (ե) արգելում է «երեխաների տեղափոխումը մի խմբից մյուսը», հետևաբար հոդված 2 (ե)-ի խախտման երկու հիմնական տարրերն են երեխաների տարանջատումը իրենց խմբից և այլ խմբում նրանց ներառումը: Հոդվածը չի ենթադրում այլ խմբում երեխաների լրիվ

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.05.2017:

1 ՄԱԿ-ի կայքէջում հայերեն տեքստի մեջ «forced transfer»-ը թարգմանված է «բռնի փոխանցում», որին համաձայն չենք, քանի որ փոխանցումը ենթադրում է թիրախավորված խմբի մասնակցությունը երեխաների հանձնման գործընթացին, ինչը չի արտահայտում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ե կետի էությունը: «Փոխանցել» բառի իմաստը տես, օրինակ, **Հրաչյա Աճառյան**, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1980, էջ 762:

2 Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիա, [http://www.Un.Am/Res/Un%20treaties/iii\\_1.Pdf](http://www.Un.Am/Res/Un%20treaties/iii_1.Pdf):

Թ. (ԺԵ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (59), հուլիս-սեպտեմբեր, 2017  
ՎՎԿ համահայկական հանդես

ծուլում, իսկ երեխաների այլ խումբ տեղափոխման պահանջը համարվում է բավարարված, երբ երեխաներն արդեն գտնվում են այլ խմբի հսկողության տակ: Երեխաների բռնի տեղափոխումը պետք է իրականացվի տվյալ խմբի ոչնչացման մտադրությամբ, և այն հարցը, թե արդյոք երեխաների բռնի տեղափոխման հանցագործություն իրականացնողը նպատակ ունի որևէ կերպ օգտագործելու երեխաներին կամ նրանցից շահ ստանալու, դեր չի խաղում մեղքը որոշելու հարցում: Կարևորագույնը տվյալ խմբի ոչնչացման մտադրությունն է: Դերակատարություն չունեն նաև երեխաներին «փրկելու» շարժառիթները, քանի որ դրանք չեն դիտարկվում ցեղասպանության հանցագործության համար մեղքի որոշման համատեքստում<sup>3</sup>:

Հանցագործությունը «ցեղասպանություն» որակելու համար երեխաները պետք է բռնի կերպով տեղափոխվեն մեկ խմբից մեկ այլ խումբ: Համաձայն նախադեպային իրավունքի՝ երեխաների բռնի տեղափոխումը կարող է իրականացվել ինչպես անմիջական ուժի կամ բռնության կիրառմամբ, այնպես էլ ճնշման, ազատագրկման/կալանքի տակ պահելու, հոգեբանական ճնշումների կամ հարկադրանքի այլ մեթոդներով: Ռուանդայի գործով միջազգային դատարանի մեկնաբանությամբ «Ցեղասպանության կոնվենցիայի II (ե) կետը միտված է ոչ միայն բռնի կերպով՝ ֆիզիկական ուժի անմիջական կիրառմամբ, երեխաների տեղափոխումը արգելելուն, այլև յուրաքանչյուր այլ սպառնալիքի կամ տրավմատիկ գործողության միջոցով, ինչը հանգեցնում է երեխաների բռնի տեղափոխմանը մարդկային մի խմբից մյուսը»<sup>4</sup>:

Չնայած կոնվենցիայի 2 (ե) կետը չի տարածվում մեծահասակներին բռնի կերպով տեղափոխելու վրա, սակայն նման գործողությունը որոշ հանգամանքներում կարող է հանցագործություն համարվել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կոնվենցիայի՝ Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների 7-ի 1 (դ) հոդվածով (տեղահանություն կամ բնակչության բռնի տեղափոխում) կամ պատերազմական հանցագործությունների 8-ի 2(ա) (VII) հոդվածով (անօրինական տեղահանություն կամ տեղափոխում): Ավելին, ըստ ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնախմբի մեկնաբանության՝ խմբի անդամների բռնի տեղափոխումը, հատկապես երբ այն ներառում է ընտանիքի անդամների բաժանում, կարող է նաև համարվել ցեղասպանական գործողություն՝ Ցեղասպանության կոնվենցիայի երկրորդ հոդվածի (գ) կետով<sup>5</sup>:

1915 թ. գարնանը Առաջին համաշխարհային պատերազմի քողի տակ օսմանյան կառավարությունը զինաթափում և սպանում է օսմանյան բանակ զորակոչված հայ տղամարդկանց: 1915 թ. ապրիլի 24-ի օսմանյան կառավարության հրամանով արքայություն և սպանվում են հայ քաղաքական, մշակութային, կրոնական և մտավորական գործիչները: Սրան հաջորդում է հայ ազգաբնակչության (գլխավորապես կանանց, ծերերի և երեխաների)

3 Տե՛ս **Mundorff Kurt**, *Other Peoples' Children: A Textual and Contextual Interpretation of the Genocide Convention, Article 2(e)*, «Harvard International Law Journal», Vol. 50, 2009, էջ 91-101:

4 *The Prosecutor vs. Georges Anderson Nderubumwe Rutaganda* Case No. ICTR-96-3-T, para. 55; *Prosecutor v. Akayesu*, Case No. ICTR-96-4-T, Judgment, at paras. 54, 78-129 (Sept. 2, 1998) para. 509:

5 Տե՛ս Draft Code of Crimes against the Peace and Security of Mankind with commentaries 1996 [http://legal.un.org/ilc/texts/instruments/english/commentaries/7\\_4\\_1996.pdf](http://legal.un.org/ilc/texts/instruments/english/commentaries/7_4_1996.pdf), էջ 46:

սիստեմատիկ տեղահանությունը՝ ճանապարհին նրանց սպանելով և զրկելով կենցաղային տարրական պայմաններից, ինչը հանգեցնում է սովի, հիվանդությունների և մահվան:

Տեղահանությունների ժամանակ բռնի տեղափոխված հայ երեխաները իսլամացվում էին: Տեղահանության քարավանները դիտավորյալ չէին հսկվում, ինչի արդյունքում թուրք, քուրդ և արաբ գյուղական ազգաբնակչությունը բռնի կերպով տիրանում էր հայ կանանց և երեխաներին: Նրանց վաճառում էին, գնում, տանում մուսուլմանական տներ (հաճախ նրա տուն, ով սպանել էր իրենց ընտանիքի անդամներին), պարտադրում կրոնափոխություն: Տղաներին թլպատում էին, աղջիկներին՝ բռնի կերպով ամուսնացնում, տանում հարեմներ, անբարո տներ, վաճառում սեռական ստրկության: Միևնույն ժամանակ լավ մշակված պետական քաղաքականության համաձայն՝ հայ երեխաները հաստատվում էին պետական որբանոցներում: Հայոց ցեղասպանության ընթացքում մուսուլմանների մոտ բռնի տեղափոխված հայ երեխաների թիվն աննախադեպ էր<sup>6</sup>:

## 1. Հայոց ցեղասպանության ժամանակ հայ երեխաների բռնի տեղափոխումը և Ազգերի լիգան

Հայոց ցեղասպանության գործադրման ընթացքում երեխաների և կանանց բռնի տեղափոխման և իսլամացման փաստը ճանաչվել է միջազգային մակարդակով: Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածը սահմանում է. «Նկատի առնելով, որ 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող ահաբեկչական ռեժիմի պատճառով իսլամացումը չէր կարող տեղի ունենալ նորմալ պայմաններում, և այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ճանաչվում, և այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914 թ. նոյեմբերի 1-ը մուսուլման չեն եղել, կդիտվեն որպես ոչ մուսուլման, եթե միայն իրենց ազատությունը վերականգնելուց հետո նրանք սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձևականությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար: Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վայրագությունների չարիքն առավելագույն չափով քավելու համար Օսմանյան կառավարությունը պարտավորվում է իր և Օսմանյան իշխանությունների կողմից ցուցաբերել ամեն տեսակի աջակցություն՝ 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկայված և ազատագրված ամեն ռասայի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար: Հենց տուժածների, նրանց ընտանիքների և մերձավորների բողոքներն ընդունելու, անհրաժեշտ հետաքննություններ կատարելու և վերոհիշյալ անձանց վերջնականապես ազատելու մասին որոշումներ կայացնելու գործում օսմանյան կառավարությունը պարտավորվում է դյուրացնել Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակվելիք խառը հանձնաժողովների գործո-

6 Այս մասին առավել մանրամասն տես **Գոդյան Է.**, Փրկություն հայ որբերին. Առաքել Կ. Չարքյանի հուշերը, «Ցեղասպանագիտական հանդես», տարի 4, N 2, 2016, էջ 158-203, նաև **Akcam Taner**, The Young Turks' Crime against Humanity. The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton University Press, 2012, էջ 287-341, **Sarafian Ara**, «The Absorbition of Armenian Women and Children into Muslim Household as a Structural Component of the Armenian Genocide», in In God's Name. Genocide and Religion in the Twentieth Century, ed. by **Bartov O.** and **Mack Ph.**, New-York, Oxford 2000, էջ 210-211, **Watenpaugh Keith**, «Are There Any Children for Sale?»: Genocide and the Transfer of Armenian Children (1915-1922), «Journal of Human Rights», Vol. 12, Iss. 3, 2013, էջ 283-295:

դրությունները: Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հարկադրել, որ հարգվեն այն հանձնաժողովների որոշումները և ապահովվեն այս ձևով իրենց բոլոր իրավունքները վերականգնած անձանց անվտանգությունն ու ազատությունը»<sup>7</sup>:

Ազգերի լիգայի Կանոնադրության 23-րդ (գ) հոդվածը նախատեսում էր կազմակերպության ընդհանուր վերահսկողությունը որևէ միջազգային պայմանագրի առարկա հանդիսացող կանանց և երեխաների թրաֆիկինգի նկատմամբ<sup>8</sup>: Ելնելով կանոնադրության այս դրույթից և ի կատարումն Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածի՝ 1920 թ. դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգայի Վեհաժողովը կազմակերպության Խորհրդին հրավիրում է ստեղծելու Հետաքննիչ հանձնաժողով՝ պարզելու տեղահանված կանանց և երեխաների հետ կապված՝ Թուրքիայում, Հայաստանում, Փոքր Ասիայում և հարակից տարածքներում տիրող իրավիճակը<sup>9</sup>: Սակայն նշված երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով Ազգերի լիգայի կողմից նշանակվում են գործին լավ տիրապետող երեք անձինք, որոնք գտնվում էին խնդրո առարկա տարածքներում: Միաժամանակ որոշվում է քննությունը սկսել նախ դաշնակիցների տիրապետության տակ գտնվող տարածքներից՝ աստիճանաբար ընդլայնելով հետաքննության աշխարհագրությունը: Ազգերի լիգայի ներկայացուցիչները պետք է աշխատեին Կոստանդնուպոլսում դաշնակիցների բարձր հանձնակատարների հետ սերտ համագործակցությամբ, իսկ Ազգերի լիգայի անդամ պետությունները պարտավորվում էին համապատասխան աջակցություն ցուցաբերել և տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

Հանձնաժողովը, որը պաշտոնապես կոչվում էր «Մերձավոր Արևելքում կանանց և երեխաների պաշտպանության հետաքննիչ հանձնաժողով», հեռու էր քաղաքական որևէ նշանակությունից ու բնույթից և գործելու էր զուտ մարդասիրական նպատակներից ելնելով<sup>10</sup>: Աշխատանքներն իրականացնելու նպատակով Հանձնաժողովն իր նստավայրերը բացեց Հալեպում, որտեղ Ազգերի լիգայի հանձնակատար նշանակվեց Կարեն Եպպեն<sup>11</sup>, և Կոստանդնուպոլսում, որտեղ հանձնակատարներ դարձան Վիլյամ Քենեդին<sup>12</sup> և Էմմա Քուշմանը<sup>13</sup>:

7 [www.hri.org/docs/sevres](http://www.hri.org/docs/sevres):

8 Տե՛ս [http://avalon.law.yale.edu/20th\\_century/leagcov.asp#art23](http://avalon.law.yale.edu/20th_century/leagcov.asp#art23):

9 Մերձավոր Արևելքում կանանց և երեխաների պաշտպանության հետաքննիչ հանձնաժողովը պետք չէ շփոթել Խառը հանձնաժողովի հետ, որը պետք է նշանակվեր Ազգերի լիգայի խորհրդի կողմից Սևրի պայմանագրի վավերացումից հետո:

10 Տե՛ս League of Nations Archives (այսուհետև՝ LNA), Classement 12, Document 13863, Dossier 4631:

11 Ազգերի լիգայի հանձնակատարի պաշտոնում Կարեն Եպպեի թեկնածությունն առաջադրվել էր մի շարք հայտնի կարևոր մարդասիրական կազմակերպությունների կողմից: Նա դանիացի միսիոներ և հասարակական աշխատող էր, նաև բավականաչափ լավ տեղեկացված տեղահանված կանանց և երեխաների հարցերով, տիրապետում էր հայերենին և թուրքերենին: Տե՛ս LNA, Classement 12, Document 13286, Dossier 4631:

12 Վիլյամ Քենեդիի թեկնածությունն առաջադրվել էր Կոստանդնուպոլսի բրիտանական բարձր հանձնակատարի կողմից: Նա բրիտանացի բժիշկ էր և աշխատում էր Կոստանդնուպոլսում գաղթականների հետ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս LNA, Classement 12, Document 11156, Dossier 4631:

13 Էմմա Քուշմանի թեկնածությունն առաջադրվել էր Կոստանդնուպոլսի Ամերիկյան քոլեջի նախագահների կողմից: Նա Մերձավոր արևելքի նպաստամատույցի բուժքույր էր և Կոնիայում հոգ էր տանում տեղահանված հայ կանանց և երեխաների մասին, բավականաչափ լավ ծանոթ էր հայերին, թուրքերին և հույներին: Տե՛ս LNA, Classement 12, Document 13286 and 11634x, Dossier 4631. Տե՛ս նաև **James Barton**, *The Story of the Near East Relief (1915-1930): An Interpretation* (New York: Macmillan, 1930), էջ, 68:

Ըստ Ազգերի լիգայի հանձնակատար Կարեն Եպպեի՝ միջազգային առաքելությունների իրականացրած որոնողական և փրկարարական միջոցառումներից բացի՝ շուրջ 30.000 հայ դեռևս գտնվում էր Վերին Միջագետքում<sup>14</sup>: Իրավիճակը, սակայն, Կոստանդնուպոլսում ավելի ծանր էր՝ կապված նաև դեպի մայրաքաղաք գաղթականների և որբերի ներհոսքի հետ: Վիլյամ Քենեդին և Էմմա Քուշմանը, որոնք աշխատել էին օսմանյան պետության տարբեր որբանոցներում, նշում էին, որ մայրաքաղաքի որբերից 52.500-ը և շուրջ 6.000-ն էլ դաշնակիցների կողմից օկուպացված Անատոլիայի այլ մասերում, ազգությամբ հայեր են: Փաստորեն, ըստ Ազգերի լիգայի ներկայացուցիչների տվյալների՝ մուսուլմանական տարբեր տների և հաստատությունների հայ որբերի թիվը 73.350 էր, որից 60.750-ը գտնվում էր դաշնակիցների կողմից օկուպացված, իսկ 12.600-ը՝ ոչ օկուպացված տարածքներում<sup>15</sup>:

Ինչպես արդեն նշվեց, Կարեն Եպպեն իր մարդասիրական գործունեությունն իրականացնում էր Օսմանյան կայսրության՝ Ֆրանսիայի կողմից օկուպացված տարածքներում: Հետաքննիչ հանձնաժողովի հալեայյան մասնաձյուղն իրականացնում էր հետաքննության տարածքում մուսուլմանների ձեռքերում գտնվող հայերի ազատագրումն ու ռեպրիլիտացիան՝ ֆիզիկական և հոգեկան վերականգնումը: Եթե Կոստանդնուպոլսում լիգայի հանձնակատարներն ավելի հեշտությամբ էին կարողանում հավաքագրել հայ որբերին թուրքական կառավարության առերևույթ աջակցությամբ և դաշնակցային ոստիկանական ուժերի օժանդակությամբ, ապա Հալեայի մասնաձյուղում իրավիճակն այլ էր. նախ՝ չկար դաշնակիցների անմիջական աջակցությունը, իսկ տեղի մուսուլման քոչվոր ցեղերը չէին ցանկանում վերադարձնել իրենց մոտ գտնվող հայ կանանց և երեխաներին: Երբեմն հայերն իրենք չէին ցանկանում լքել իրենց «փրկողների» տները պաշտպանության, համատեղ երեխաների, ստեղծված ընտանեկան կապերի և այլ պատճառներով: Բացի այդ՝ շատերը վախենում էին լքել մուսուլմանական տները կամ ընդունել իրենց հայկական ինքնությունը, քանի որ գիտեին, թե իբր ոչ մի հայ կենդանի չի մնացել<sup>16</sup>, նաև վախ ունեին, որ 1915-ը կկրկնվի, ինչպես նաև կխուսափեն բռնվելու դեպքում հնարավոր պատժից: Փոքր տարիքում առևանգված հայ մանուկները մեծացել էին որպես մուսուլման, և նրանցից շատերը տեղյակ չէին իրենց հայկական ծագման մասին: Սակայն լսելով փրկարարական առաքելությունների մասին՝ ինքնական փախչում էին իրենց «քանտերից»<sup>17</sup>:

Եպպեն համոզված էր, որ չնայած երկար տարիների դժվարություններին՝ իսլամացած հայերի զգալի մասը կապված է իրենց հայկական արմատներին և հնարավորության դեպքում կմիավորվի ազգակիցներին ու կվերադառնա սեփական ինքնությանը: Դա հատկապես վերաբերում էր 12-20 տարեկան տղաներին և չամուսնացած աղջիկներին, որոնք կապված չէին ամուսնության և մայրության շղթաներով: Ազգերի լիգային ուղղված իր առաջին միջանկյալ

14 Բացի Դիարբեքիից, Խարբերդից և Կիլիկիայից: Տե՛ս LNA, Classement 12, Document 23010, Dossier 4631, տե՛ս նաև՝ **Shemmassian Vahram**, The League of Nations and the reclamation of Armenian Genocide Survivors, in Looking Backward, Moving Forward, ed. by **Richard Hovhannisian**, Transaction Publisher, 1994, էջ, 95:

15 Տե՛ս LNA, Classement 12, Document 15100, Dossier 4631:

16 Այդպես էին պնդել իրենց առևանգած մուսուլմանները: Տե՛ս LNA, Classement 12, Document 19111, Dossier 4631:

17 Նույն տեղում:

գեկույցում խոսելով արաբական ցեղերի մոտ գտնվող երիտասարդ հայերի մասին՝ Եպպեն գրում է. «Այս երիտասարդ տղաներն ու աղջիկները առողջ են՝ մաքուր օդից և դրսի կյանքից, սովոր են աշխատելու, ինչը համարում են կյանքի բնական պայման: Նրանք չգիտեն ճոխություն, այնպես որ բավարարված են համեստ պայմաններով: Նրանք մաքուր են, չաղտոտված արատներով և հիվանդություններով, ինչը տեղի էր ունեցել քաղաքի հարեմներում փակված իրենց բազմաթիվ դժբախտ հայրենակիցների հետ և նրանց դարձրել անպետք մաքուր հայկական կյանքի համար»<sup>18</sup>:

Ազգերի լիգայի այս առաքելությունն, ըստ Եպպեի, ոչ միայն օգնելու էր ազատել հայերին, այլև լուծելու էր հայկական կյանքին ինտեգրվելու համար ազատագրվածներին համապատասխան հնտություններով ապահովելու հարցը<sup>19</sup>:

Հալեպի փրկության տունը, որը ստեղծվել էր դեռ 1918 թ. Մերձավոր արևելքի նպաստամատույց կազմակերպության կողմից, իսկ այնուհետև օգտագործվել Ազգերի լիգայի և Փախստականների գործով Նանսենյան հանձնաժողովի կողմից, տեղակայված էր Հալեպի հյուսիսում՝ Շեխ Դահա կոչվող վայրում: Հյուսիսային Սիրիայի տարբեր քաղաքներում և բնակավայրերում գտնվող գործակալների (հայ և արաբ) և կայանների շնորհիվ (Ջարաբլուս, Ռաս ուլ Այն, Արաբ Փունար, Մարդին, Դեյր-էլ-Ջոր, Հասիչե, Ռաքքա, Բաբ) Եպպեն իր որդեգիր Միսաբ Մելքոնյանի<sup>20</sup> հետ կարողացավ Փրկության տանը օթևանել մուսուլմանական գերությունից փրկված հազարավոր հայերի, որոնք ազատագրվում էին ոչ միայն արաբ բեդվիկներից, այլև սահմանակից թուրքերից և քրդերից<sup>21</sup>: Ազատագրումներն իրականացվում էին բանակցությունների, կաշառքի, ազատագրված հայերին գողանալու միջոցով<sup>22</sup>: Գումարի չափը, որը վճարվում էր որպես փրկագին կամ բերողին, կազմում էր 0,50–2 թուրքական ոսկի՝ կախված տարածաշրջանից: Երբեմն ազատագրման համար ծախսվող գումարը հասնում էր 10 թուրքական ոսկու, սակայն աշխատանքային այս ձևը բավականին արդյունավետ էր և հավանության էր արժանացել Եպպեի կողմից<sup>23</sup>:

Գերությունից ազատագրվածներն ընդունվում էին Հալեպի փրկության տուն, որտեղ նրանց անհրաժեշտ սնունդ, հագուստ, բժշկական խնամք էր տրամադրվում: Քանի որ Հալեպում որբանոցներ չկային, որբ երեխաները նույնպես ընդունվում էին Փրկության տուն<sup>24</sup>: Ազատագրվածների տվյալներն ուղարկվում էին թերթերին, եկեղեցիներին և հայկական միություններին՝ հարազատներին գտնելու համար: Ազատագրվածները հարցաքննվում էին, ինչը գրանցվում էր հատուկ մատյաններում:

Ժնևում գտնվող Ազգերի լիգայի արխիվում պահվում են մուսուլմանական

18 Նույն տեղում:

19 Տե՛ս **Jeppe Karen**, *Misak: An Armenian Life* (Karen Jeppe's story of an orphan who became a son), translated, edited and introduced by **Jonas Kauffeldt**, London: Gomidas Institute, 2015, էջ xxxiv–xxxix.

20 Կարեն Եպպեն Միսաբ Մելքոնյանին որդեգրել էր 1905 թ. Ուրֆայում, ուր տեղափոխվել էր 1903 թ. և աշխատում էր գերմանական որբանոցում և դպրոցում՝ որպես խնամատար և ուսուցչուհի:

21 Սանրամասն տե՛ս **Չոլաքեան Յ.**, Քարէն Եպպէ. Հայ գողոգթային և Վերածնունդին հետ, Հալէպ 2001, էջ 49–64:


22 Տե՛ս **Bjørnlund Matthias**, Karen Jeppe, Aage Meyer Benedicstsen, and the Ottoman Armenians: National survival in imperial and colonial settings, «Haigazian Armenological Review», Vol. 28, 2008, էջ 28:

23 Տե՛ս LNA, Classement 12, Document 16489, Dossier 4631:

24 Տե՛ս LNA, Classement 12, Document 23010, Dossier 4631:

գերությունից փրկված 1464 հայ կանանց, երեխաների և երիտասարդ տղաների անձնաթղթերի 16 մատյանները<sup>25</sup>։ Դրանք պարունակում են ընդունվողի հերթական համարը, Հալեայի փրկության տուն ընդունվելու ժամանակ արված անձի լուսանկարը, որոշ կենսագրական տվյալներ՝ անունը, ծնողների անունը, ծագման վայրը, տարիքը և Փրկության տուն ընդունվելու ամսաթիվը։ Սրան հաջորդում է փրկվածի կարծ պատմությունը 1915 թ. իրադարձությունների, իր գերության և փրկության մասին։ Անձի ձակատագրի հետագա ընթացքի մասին նշումներն անձնաթղթի հաջորդ էջում են (օրինակը տես՝ Նկար 1-ում)։

Նկար 1: Մանսուրա Մատիկյանի անձնաթուղթը<sup>26</sup>



25 Տես՝ LNA 1926. «Records of the Nansen International Refugee Office, 1920–1947». In Registers of Inmates of the Armenian Orphanage in Aleppo, 1922–1930, Vol. 4, Geneva: United Nations Organization.

26 Թարգմանություն. N 515 Մանսուրա Յուսուֆի Մատիկյան, Մարդին, 30 տարեկան, ընդունվել է Հալեայի փրկության տուն 1924 թ. մայիսի 21-ին։

«Մանսուրայի ամուսինը սպանվել է տեղահանությունների սկզբում, իսկ նա դատեր և որդու հետ տեղահանվել է Դեր-էլ-Ջոր։ Սիրիական անապատներով երկար և դժվար ճանապարհից հետո նրանք հասել են Դեր-էլ-Ջոր, որտեղ թուրքերի և արաբների կողմից տեղի է ունենում Դեր-էլ-Ջորի կոտորածը։

Մի ծանոթ արաբ ամուսնացել է Մանսուրայի հետ՝ նրան և նրա երեխաներին իր հետ տանելով իր տուն՝ կոտորածից փրկելու համար։ Մեկ տարի արաբի հետ ապրելուց հետո Մանսուրան փախչում է Սինջար անունով մի գյուղ, որտեղ հանդիպում է որոշ ընկերների և երկու տարի նրանց հետ աշխատում է տարբեր քրդական տներում՝ երեխաներին պահելու համար։ Երկու տարում հավաքելով որոշակի գումար՝ Մանսուրան հիսուն այլ հայ կանանց և տղամարդկանց հետ ճանապարհվում է իր հարազատ Մարդին քաղաքը։ Ճանապարհին նրանք ենթարկվում են արաբների հարձակմանը, որոնք ամբողջով թալանում են խմբին։ Ծայրահեղ թշվառ վիճակում նրանք շարունակում են ճանապարհը դեպի Նիսիբին, որտեղ չնչին գումարով աշխատանք են գտնում գերմանական երկաթուղային ճանապարհաշինարարական ընկերությունում (German Rail Road Company)։

Մանսուրան կարողանում է ապահովել իրեն ու երեխաներին և նույնիսկ որոշ գումար տնտեսել։ Նա կարողանում է վերադառնալ Մարդին։ Այստեղ թուրքական իշխանությունը վերադարձնում է կնոջ տունը, որտեղ Մանսուրան ապրում է 4 տարի։ Մակայն երբ հայերը սկսում են տարագրվել Սիրիա, թուրքական իշխանությունը կրկին բռնագրավում է Մանսուրայի տունը, որը սկսում է ծառայել որպես Ոստիկանական կայան։ Ոստիկաններից մեկը ցանկանում է ամուսնանալ Մանսուրայի հետ, սակայն վերջինս փախչում է քահանայի մոտ, որը կնոջը ուղարկում է Հասիչեի մեր կայան։ Այնտեղից էլ Դեր-էլ-Ջորով Մանսուրային բերում են մեր Ընդունելության տուն։

Նրա փոքրիկ աղջիկը դեռևս արաբների մոտ էր։

Դուրս է եկել մեր խնամատարությունից 7.6.1924: Բարեկամների հետ է»։

## 2. Հալեալի փրկության տան կանանց և աղջիկների վկայությունները Հայոց ցեղասպանության մասին

Հալեալի փրկության տան հայ կանանց և աղջիկների<sup>27</sup> թիվը հասնում էր 573-ի, որը շուրջ մեկ երրորդով քիչ էր փրկված արական սեռի ներկայացուցիչներից (891 անձ)՝ չնայած այն հանգամանքին, որ Հայոց ցեղասպանության ժամանակ ողջ թողնված և այնուհետև իսլամացված հայ կանանց ու աղջիկների թիվն, անտարակույս, շատ էր: Ըստ Եպպելի, «ագգության վերաբերյալ (հայերի) զգացողությունները զարմանալիորեն ուժեղ են, հատկապես հայ տղաների մոտ և իրենց զգացնել են տալիս հատկապես այն տարիքում, երբ գիտակցում են իրենց իրական ծագումը»<sup>28</sup>: Սա կարելի է բացատրել մի շարք ֆիզիկական և հոգեբանական բնույթի հանգամանքներով: Անշուշտ, ֆիզիկական առումով արական սեռի ներկայացուցիչներն ավելի ուժեղ էին և ավելի մեծ հավանականություն ունեին վերապրելու 1915 թ. սարսափներն ու դժվարությունները: Բացի այդ՝ հենց նույն ֆիզիկական կարողության շնորհիվ նրանք ավելի հեշտությամբ էին կարողանում փախչել մուսուլմանական տներից: Միաժամանակ սոցիալ-հոգեբանական կապերի բացակայության, նախկին հոգեցնցումները վերապրելու ավելի ուժեղ կարողության տեսանկյունից դա ավելի նպաստավոր կարգավիճակ էր փախուստի համար: Իսկ կանանց առումով իրավիճակն այլ էր. սեռական բռնության, վախի, ֆիզիկական թուլության, մուսուլման անուսիներից ծնված երեխաների, իրենց երեխաներին երկրորդ անգամ թողնելու անկարողության պայմաններում (շատերն արդեն 1915 թ. ստիպված էին եղել թողնել իրենց հայ երեխաներին), հայ կանանց ու աղջիկների համար իսլամական գերությունից փախչելն այս առումով առավել բարդ էր: Միննույն ժամանակ, իսլամացված հայ կանանց հետ էին պահում իրենց տերերը, ինչպես նաև հայ ավանդական հասարակության մեջ վերահիստեգրվել չկարողանալու վախը<sup>29</sup>:

**Ինչպես ցույց են տալիս Փրկության տանն արված հարցաքննությունների տվյալները, կին փրկվողների մեծ մասը Հայոց ցեղասպանության տարիներին երեխա է եղել (1-18 տարեկան) և գտնվել է բռնի տեղափոխման և իսլամացման թիրախում: Աղյուսակ 1-ը հստակորեն ցույց է տալիս, որ թուրքական քաղաքականությունն ուղղված էր հենց երեխաների դեմ:**

27 Աղջիկ և կին բաժանումը կատարված է իրավական սկզբունքով. մինչև 18 տարեկան երեխաները՝ աղջիկ, 18 տարեկանից բարձր՝ կին:

28 Տե՛ս LNA, Classement 12, Document 23010, Dossier 4631:

29 Ավելի մանրամասն տե՛ս **Tachjian Vahe**, Gender, nationalism, exclusion: The reintegration process of female survivors of the Armenian Genocide. *Nations and Nationalism*, 15(1), 2010; **Ekmekcioglu Lerna**, A Climate for Abduction, Climate for Redemption: the Politics of Inclusion during and after the Armenian Genocide, «Comparative Studies in Society and History 2013», N 55(3):



**Աղյուսակ 1. Հալեպի փրկության տան հայ կանանց և աղջիկների տարիքը 1915 թ.<sup>30</sup>**

1 տարեկան – 11 աղջիկ	14 տարեկան – 18 աղջիկ	26 տարեկան – 6 կին
2 տարեկան – 21 աղջիկ	15 տարեկան – 15 աղջիկ	27 տարեկան – 4 կին
3 տարեկան – 25 աղջիկ	16 տարեկան – 10 աղջիկ	28 տարեկան – 3 կին
4 տարեկան – 33 աղջիկ	17 տարեկան – 18 աղջիկ	30 տարեկան – 4 կին
5 տարեկան – 29 աղջիկ	18 տարեկան – 6 կին	31 տարեկան – 1 կին
6 տարեկան – 40 աղջիկ	19 տարեկան – 6 կին	32 տարեկան – 1 կին
7 տարեկան – 45 աղջիկ	20 տարեկան – 11 կին	33 տարեկան – 2 կին
8 տարեկան – 37 աղջիկ	21 տարեկան – 8 կին	35 տարեկան – 1 կին
9 տարեկան – 44 աղջիկ	22 տարեկան – 8 կին	36 տարեկան – 1 կին
10 տարեկան – 21 աղջիկ	23 տարեկան – 13 կին	39 տարեկան – 1 կին
11 տարեկան – 34 աղջիկ	24 տարեկան – 4 կին	44 տարեկան – 1 կին
12 տարեկան – 22 աղջիկ	25 տարեկան – 9 կին	59 տարեկան – 1 կին
13 տարեկան – 17 աղջիկ		

Միևնույն ժամանակ Հալեպի փրկության տան 9-ամյա գործունեության ընթացքում (1922-1930 թթ.) փրկվողների թիվը աստիճանաբար նվազում է, քանի որ ժամանակի հետ ավելի էր դժվարանում տեղահանված և իսլամացված հայերի ծագումը բացահայտելը: Աղյուսակ 2-ում ներկայացված է փրկվողների թիվը՝ ըստ տարիների:

**Աղյուսակ 2. Ազատագրված կանանց ու աղջիկների թվաքանակը 1922-1930 թթ.**

1922 թ. – 61 աղջիկ/կին	1927 թ. – 57 աղջիկ/կին
1923 թ. – 96 աղջիկ/կին	1928 թ. – 47 աղջիկ/կին
1924 թ. – 60 աղջիկ/կին	1929 թ. – 32 աղջիկ/կին
1925 թ. – 97 աղջիկ/կին	1930 թ. – 18 աղջիկ/կին
1926 թ. – 105 աղջիկ/կին	

Հարացաքննության նյութի համաձայն՝ Հալեպի փրկության տան իգական սեռի ներկայացուցիչների մեծ մասը ազատագրվել էր թուրքական, ապա արաբական և քրդական տներից: Քիչ թիվ էին կազմում այն աղջիկները/կանայք, ովքեր առևանգվել ու պահվել էին չեչենների կամ գնչուների մոտ (մանրամասն տես Աղյուսակ 3): Հետաքրքրական է, որ պատմությունների մեջ կային կանայք, ովքեր փախել էին իրենց իսլամացված հայ ամուսիններից:

30 Աղյուսակում նշված չեն 1915-ից հետո ծնվածները:

**Աղյուսակ 3. Բռնի կերպով տեղափոխված կանանց և երեխաների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ իսլամադավան ընտանիքներում բաշխվածության**

Թուրք – 35, 5 %
Արաբ – 26, 7 %
Քուրդ – 20, 8 %
Չեչեն – 0, 8 %
Իսլամացած հայ – 0, 6 %
Այլ – 0, 6 %

Ինչպես արդեն նշվեց, Եպպեն ազատագրվածների անուններն ուղարկում էր թերթերին, եկեղեցիներին և հայկական միություններին՝ հարազատներին գտնելու համար: Միևնույն ժամանակ Տան սաների համար կազմակերպվում էին ասեղնագործության, գորգագործության, կաշեգործության և այլ դասընթացներ՝ հետագայում նրանց համար աշխատանք գտնելու ակնկալիքով<sup>31</sup>: Ազատագրվածների համար ձեռք էին բերվում ինքնության նոր վկայականներ: Իրականացվում էին նաև ազատագրվածներին քրիստոնեությանը վերադարձնելու աշխատանքներ<sup>32</sup>:

**Աղյուսակ 4. Ազատագրված կանանց և աղջիկների ճակատագիրը Հալեպի փրկության տնից դուրս գալուց հետո**

Բարեկամներ – 263
Ինքնաբավ – 149
Բարեկամներ ամուսնությունից – 51
Որբանոցներ – 62
Եկեղեցի – 10
Մահացած – 4

Հալեպի փրկության տան հայուհիների պատմությունները ներկայացնում են Հայոց ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչները: Ականատեսների այս վկայությունները ամբողջությամբ կրկնում և հաստատում են մեզ հայտնի իրողություններն ու փաստերը 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ: Բոլոր պատմությունները սկսում են 1915 թ. հայ տղամարդկանց ճակատագրերի ներկայացմամբ: Ըստ տվյալների՝ հայ այն տղամարդիկ, ովքեր զորակոչվել էին թուրքական բանակ, ավելի ուշ սպանվել էին կամ մահացել ծանր աշխատանքից<sup>33</sup>: Կանանցից մեկը հետևյալն է պատմում իր ամուսնու ճակատագրից. «Ամուսինս զորակոչվել էր բանակ և տեղակայվել ճանապարհաշինարարական ջոկատում: Մի օր հայ զինվորներն առանձնացվեցին, և երբ նրանք գնացին ճանապարհ շինելու,

31 Ավելի մանրամասն տե՛ս **Karen Jeppe**, *Misak: An Armenian Life*.  
 32 Ավելի մանրամասն տե՛ս **Shemmassian Vahram**, *The League of Nations and the reclamation of Armenian Genocide Survivors*, in *Looking Backward, Moving Forward*, ed. by **Richard Hovhannisian**, Transaction Publisher, 1994, էջ. 98-99:  
 33 Տե՛ս N 1445-ի հարցաքննությունը:

հետևից սպանվեցին իրենց թուրք ծառայակիցների կողմից»<sup>34</sup>: Նրանք, ովքեր չէին զորակոչվել, սպանվել էին իրենց բնակության վայրերում կամ գաղթի ճանապարհին՝ առանձնացվելով իգական սեռից<sup>35</sup>:

Այդ վկայություններում խոսվում է նաև հայ երեւելիների սպանդի մասին, որոնք ըստ ներկայացված տվյալների՝ հավաքվել էին, բանտարկվել, ենթարկվել կտտանքների ու սպանվել<sup>36</sup>:

Այնուհետև ներկայացվում է Հայոց ցեղասպանության երրորդ բաղադրիչը՝ մնացած ազգաբնակչության տեղահանությունը, որի մասին խոսվում է բոլոր վկայություններում:

Տեղահանության ճանապարհին արքայազն տղամարդկանց առանձնացնում էին և սպանում<sup>37</sup>: Պատմությունները ներկայացնում են գաղթի ճանապարհին կրած տառապանքներն ու զրկանքները՝ կիզիչ արևի տակ անվերջ քայլելիս, սովից, ծարավից ու հյուծումից<sup>38</sup>: Հազարավոր մարդիկ մահանում էին ճանապարհին տիֆից, դիզենտերիայից (շիզելյոզ) և տարբեր այլ վարակիչ հիվանդություններից<sup>39</sup>:

Բազմաթիվ հայ մայրեր վերահաս վտանգից իրենց երեխաներին փրկելու համար տեղահանությունից առաջ կամ տեղահանության ընթացքում հանձնում էին իրենց երեխաներին թուրքերին, քրդերին ու արաբներին<sup>40</sup>: Ոմանք գետն էին նետում իրենց երեխաներին՝ կոտորածի ու անարգանքի ձիրաններից փրկելու և ավելի արժանապատիվ մահ ապահովելու համար<sup>41</sup>:

Տեղահանության քարավանները մշտապես հարձակման էին ենթարկվում թուրքերի, քրդերի և արաբների կողմից, որոնք տեղահանվածներին կողոպտելուց հետո սպանում կամ վիրավորում էին մահվան ձիրաններում քայլող հայերին<sup>42</sup>: Կանայք ու երեխաները ենթարկվում էին սեռական բռնությունների, նետվում գետերի մեջ, հազարավորներն էլ՝ անխնա կոտորվում<sup>43</sup>:

Եվ այս ամենն արվում էր այնքան անմարդկային ձևերով, ինչն անպատվություն է բերում ողջ մարդկությանը<sup>44</sup>: Տան բնակիչներից մեկի՝ Վիկտորյայի խոսքերով՝ ինքը 13 տարեկան էր, երբ սկսվեցին տեղահանումները: Ճանապարհին նա փորձում էր փախչել մի արաբից, որը ցանկանում էր տիրանալ խեղձ երեխային: Արաբի հետապնդումներից փրկվելու համար աղջիկն իրեն նետում է գետը՝ մահանալու ակնկալիքով, սակայն արաբը բռնում է նրան և բռնաբարում<sup>45</sup>: Երբեմն մայր ու աղջիկ բաժին էին հասնում միևնույն բռնարարին<sup>46</sup>:

Նրանք, ովքեր ողջ մնացին, հիմնականում կանայք ու երեխաներն

34 Տե՛ս նույն տեղում:

35 Տե՛ս N 397, 640, 661,759, 984, 987, 1004, 1336, 1352, 1353-ի հարցաքնությունները:

36 Տե՛ս N 678, 1870-ի հարցաքնությունները:

37 Տե՛ս N 984, 1004-ի հարցաքնությունները:

38 Տե՛ս N 238, 240, 370, 712, 848, 985, 1310, 1403, 1864-ի հարցաքնությունները:

39 Տե՛ս N 1843-ի հարցաքնությունը:

40 Տե՛ս N 242, 245, 302, 305, 316, 361,512, 676, 981, 987, 1016, 1330, 1476-ի հարցաքնությունները:

41 Տե՛ս N 238, 240, 370-ի հարցաքնությունները:

42 Տե՛ս N 246, 247, 248, 339, 957-ի հարցաքնությունները:

43 Տե՛ս N 238, 240, 309, 364, 370, 524, 666, 848, 984-ի հարցաքնությունները:

44 Տե՛ս N 984-ի հարցաքնությունը:

45 Տե՛ս N 666-ի հարցաքնությունը:

46 Տե՛ս N 129, 1857-ի հարցաքնությունները:

էին, սակայն նրանց սպասում էր ճակատագիր, որը սեփական մարմնում ուրիշի հոգի էր դնելու: Կենդանի մնացածները թուրքերի, քրդերի և արաբների կողմից բռնի կերպով տարվում էին ստրկության, իսկ կանայք և աղջիկները՝ մուսուլմանական տներ և կանանոցներ<sup>47</sup>: Հաճախ նրանք տարվում էին իրենց աչքի առաջ հարազատներին կոտորած մարդասպանների տները՝ ստիպված լինելով ապրել ու կենակցել նրանց հետ<sup>48</sup>:

Քարավաններն ուղեկցող ժանդարմները հավաքում էին գեղեցիկ հայ աղջիկներին ու վաճառում թուրքերին և քրդերին<sup>49</sup>: Օրինակ՝ Ջերուրից Մեզլեթ անունով մի շեյխ 12 հայ աղջիկ էր գնել<sup>50</sup>:

Գեղեցիկ հայ աղջիկները բռնությամբ վերցվում էին նաև հենց թուրք ոստիկանների և քաղաքապետերի կողմից<sup>51</sup>:

Երբեմն որոշ ժամանակ իրենց մուսուլման տերերի հետ ապրելուց հետո հայ կանայք վաճառվում էին մեկ ուրիշին<sup>52</sup>:

Հայ երեխաների ճակատագիրը ևս գրեթե նույնն էր. նրանք ենթարկվում էին «կամավոր» և բռնի տեղափոխման ու իսլամացման: Ինչպես արդեն նշվեց, երեխաներից շատերին իրենց մայրերն ինքնակամ հանձնել էին մուսուլմաններին, մյուսներին առևանգել էին քարավաններից, որդեգրել և հետագայում բռնի կերպով նրանց կնության էին տվել մուսուլմաններին<sup>53</sup>: Երեխաներին պահում էին կամ մի կտոր հացի, կամ վախի ու սպառնալիքների միջոցով: Հետաքրքրական է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ մուսուլմանները բավականաչափ լավ էին վերաբերվում բռնի փոխանցված երեխաներին, որոնք մեծանալուն պես պետք է ամուսնանալին մուսուլմանի հետ (սովորաբար 9–10 տարեկանում), հայ աղջիկներն ամեն ինչ անում էին փախչելու համար<sup>54</sup>: Երբ հայ մայրերին բռնի կերպով ամուսնացնում էին մուսուլմանների հետ, նրանք ընդդիմանում էին իրենց աղջիկներին մուսուլմանների հետ ամուսնացնելու փորձերին<sup>55</sup>:

Հալեպի փրկության տան վկայություններում խոսվում է նաև այն մասին, որ հայ երեխաներին որդեգրելու կամ հայ կանանց ու աղջիկներին հետ ամուսնանալու դեպքում մուսուլմանները տիրանում էին նրանց ունեցվածքին<sup>56</sup>: Սա, իհարկե, լրացուցիչ շարժառիթ էր հայ երեխաներին որդեգրելու և հայ կանանց հետ ամուսնանալու համար: Միաժամանակ լուծվում էր նաև հայերի լքյալ գույքի խնդիրը:

Վկայություններ կան նաև պետական որբանոցներում հայ երեխաներին տեղակայելու թուրքական կառավարության ծրագրերի մասին<sup>57</sup>: Հայ որբերը հավաքվում էին նախկին կայսրության բոլոր վայրերից և տեղակայվում թուրքական որբանոցներում՝ իսլամացման գործընթացը ավար-

47 Տե՛ս N 129, 133, 306, 309, 314, 325, 364, 359, 524, 542, 638, 691, 993, 995, 1108, 1310, 1463, 1839, 1857–ի հարցաքննությունները:

48 Տե՛ս N 995, 1108, 1862–ի հարցաքննությունները:

49 Տե՛ս N 563, 961, 1030, 1111, 1312, 1422–ի հարցաքննությունները:

50 Տե՛ս N 1420–ի հարցաքննությունը:

51 Տե՛ս N 133–ի հարցաքննությունը:

52 Տե՛ս N 345, 528, 630–ի հարցաքննությունները:

53 Տե՛ս N 293, 307, 319, 330, 589, 654–ի հարցաքննությունները:

54 Տե՛ս N 330, 369, 384–ի հարցաքննությունները:

55 Տե՛ս N 520–ի հարցաքննությունը:

56 Տե՛ս N 329, 1846, 1870–ի հարցաքննությունները:

57 Տե՛ս N 193, 225, 326, 393, 575, 1716, 1824–ի հարցաքննությունները:

տին հասցնելու համար:

Անցնելով սարսափի ու զրկանքների ուղին, ակնատես լինելով իրենց հարազատների ու հայրենակիցների կոտորածին, ենթարկվելով սեռական և ֆիզիկական ոտնձգությունների՝ շատերը հոգեկան խնդիրներ էին ձեռք բերել<sup>58</sup>, ոմանք էլ սեռական բռնությունների հետևանքով տառապում էին վեներական հիվանդություններից<sup>59</sup>: Ըստ Եպպեի, «այնպիսի տպավորություն էր, որ նրանց (հայերի) մուսուլման տերերը գիտեին, որ հիվանդ են, այդ պատճառով թողնում էին, որ գան մեր Տուն»<sup>60</sup>: Սակայն Փրկության տան բուժանձնակազմի ջանքերով հնարավոր էր լինում հաղթահարել հիվանդությունները:

Ազատագրված կանանց և աղջիկների մի մասը դաջվածքներով էին (տես Նկար 2), որոնց բարոյական ազդեցությունը երբեմն շատ մեծ էր. դաջված կանայք և աղջիկները կարծում էին, թե անպատվության դրոշմ են կրում իրենց երեսին ողջ կյանքի համար, ինչը նրանց թույլ չի տալիս վերադառնալ և այդ վիճակով երևալ իրենց հայրենակիցների աչքին<sup>61</sup>:



58 ՏՆՆ N 121, 189, 1071, 1372, 1387, 1430, 1807–ի հարցաքննությունները:

59 ՏՆՆ N 846, 923, 1316, 1802 –ի հարցաքննությունները:

60 ՏՆՆ LNA, Classement 12, Document 16489, Dossier 4631:

61 ՏՆՆ նույն տեղում:



Նկար 2. Ազգերի լիգայի Փրկության տանը ապաստանած դաջվածքով հայ կանանց և աղջիկների լուսանկարներ Ազգերի լիգայի արխիվից

Համաձայն վկայությունների՝ կային նաև մուսուլմաններ, որոնք փրկել էին հայերին անխուսափելի մահից և բավականին լավ վերաբերել, սակայն նույնիսկ այս պարագայում հայ կանայք հնարավորության դեպքում ցանկացել են վերականգնել իրենց հայկականությունը<sup>62</sup>: Հայ կանայք կամավոր լքում էին իրենց մուսուլմանական ամուսիններին և վերադառնում իրենց հայկական ծագմանը<sup>63</sup>: Իհարկե, չենք կարող հերքել, որ եղան նաև կանայք, որոնք, չդիմանալով իրենց մուսուլման ամուսիններից ծնված երեխաների կարոտին, վերադարձան իրենց մուսուլման ընտանիքներ<sup>64</sup>: Որոշ հայ կանայք իրենց հետ Հալեպի փրկության տուն բերեցին մուսուլմաններից ծնված իրենց երեխաներին, որոնք այնտեղ կնքվեցին հայկական անուններով և ընդունվեցին հայ հասարակությունում:

Համաձայն Փրկության տան անձանց վկայությունների՝ տարիներ շարունակ նրանց ասվել է, որ ոչ մի հայ կենդանի չի մնացել, ինչը հետ է պահել փախուստից<sup>65</sup>: Սակայն տեղեկանալով ազատագրման մարդասիրական առաքելությունների և Հալեպի փրկության տան մասին՝ նրանք լքում են մուսուլմանական տները՝ իրենց հետ բերելով նաև իրենց համերկրացիներին<sup>66</sup>:

Վկայություններն անդրադառնում են նաև այն դեպքերին, թե ինչպես են մանուկ ժամանակ առևանգված/փոխանցված հայերը պարզել իրենց հայկական ինքնությունը: Փրկվածներից ոմանք շատ փոքր էին տեղահանությունների ժամանակ և ոչինչ չէին հիշում իրենց ինքնության և ընտանիքի մասին: Նրանք հիմնականում բերվում էին իրենց համերկրացիների կամ բարեկամների կողմից, ովքեր տեղեկություն ունեին հայ երեխաների մասին, ականատես են եղել նրանց առևանգմանը՝ գտնվելով նույն քաղաքում, ինչպես նաև բնակվել են նույն մուսուլմանական գյուղում<sup>67</sup>:

Վկայությունների մեջ մի քանի անգամ հանդիպում է հետևյալ պատմությունը. «Մուսուլմաններն ինձ հաճախ անվանում էին «գյավուր» և երբ հետաքրքրվեցի, թե ինչ է բովանդակում այդ մոտեցումը, բացահայտեցի հայկական ծագում»<sup>68</sup>: Բազմաթիվ պատմություններ վկայում են, որ երեխաներն իրենց հայկական ինքնության և քրիստոնյա լինելու մասին տեղեկացել են իրենց իսկ մայրերից<sup>69</sup>:

Բավականաչափ հետաքրքրական էր Փրկության տան բնակչուհի Փիրուզի պատմությունը, որի մասին անձնաթերթիկում ոչ մի տեղեկություն չկա՝ բացի անունից: Աղջիկը հավանաբար 3-4 տարեկան է եղել տեղահանությունների ժամանակ և ոչինչ չէր հիշում ծնողների, բնակավայրի մասին: Նա բնակվել է Դիարբեքիքում՝ Էմին բեյի ընտանիքում: Որոշ ժամանակ անց աղջկան ստիպել են ամուսնանալ բեյի տղայի հետ: Փիրուզը չի հասկացել, թե ինչպես են իրեն ամուսնացրել եղբոր հետ և երբ հարցրել է այդ մասին, Էմին բեյը պատասխանել է, թե աղջիկն իր հայ որդե-

62 Տե՛ս N 143, 228, 1476-ի հարցաքննությունները:

63 Տե՛ս N 512, 645,780, 920, 1352-ի հարցաքննությունները:

64 Տե՛ս N 1772-ի հարցաքննությունը, նա 4 երեխա ուներ իր մուսուլման ամուսնուց:

65 Տե՛ս N 1801, 1802-ի հարցաքննությունները:

66 Տե՛ս N 634, 832-ի հարցաքննությունները:

67 Տե՛ս N 646, 792, 882,893, 926, 932, 947, 946-ի հարցաքննությունները:

68 Տե՛ս N 857, 1829-ի հարցաքննությունները:

69 Տե՛ս N 861-ի հարցաքննությունը:

գիրն է, որին նա տարիներ առաջ առևանգել էր քարավանից: Տեղեկանալով իր ծագման մասին՝ Փիրուզը որոշում է փախչել<sup>70</sup>:

Հետաքրքրական է նաև ազգապահպանման և ազգաստեղծման դրվագների նկարագրությունը Հալեպի Փրկության տան վկայություններում: Այստեղ հասկապես պետք է կարևորել հայ տղամարդու դերը, որը, անտեսելով դարավոր ավանդական հասարակության հայկական մոդելը, հետ ընդունեց իր անարգված կնոջը<sup>71</sup> կամ ամուսնացավ մուսուլմանական տներից փրկված մեկ այլ հայուհու հետ: Հատկանշական է նաև Հալեպի փրկության տան անդամների միջև ամուսնությունների զգալի թիվը՝ շուրջ 27, ինչում իր անգնահատելի դերակատարումն ունեցավ Ազգերի լիգայի հանձնակատար և մեծ մարդասեր Կարեն Եպպեն<sup>72</sup>:

Այսպիսով, Հալեպի փրկության տան հարցաքննությունները Հայոց ցեղասպանության ժամանակ երեխաների՝ այլ խումբ բռնի կերպով տեղափոխման, ինչպես նաև ցեղասպանության տարիներին և դրանից հետո փրկվածներին բաժին ընկած տառապանքների մասին առաջին վկայություններից են: Չնայած հազարավոր երեխաներ կարողացան փրկվել Հալեպի փրկության տան և Կոստանդնուպոլսի Չեզոք տան ջանքերով՝ իսլամացված հայերի մեծամասնությունը, այնուամենայնիվ, մնաց մուսուլմանների տներում<sup>73</sup>:

**Էդիտա Գ. Գզոյան** – հեղինակել է մեկ մենագրություն և շուրջ 3 տասնյակ հոդված: «Central and Eastern European Review» միջազգային ամսագրի հայաստանյան խմբագիրն է: Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց ցեղասպանության իրավական և պատմական հիմնախնդիրները, Ազգերի լիգայի և հայկական հարցի առնչությունները, գիտաչափությունը:

## Summary

### **KAREN JEPPE AND ALEPPO RESCUE HOME** In the Documents of the League of Nations Archives

Edita G. Gzoyan

**Key words** – Armenian Genocide, forced transfer of children, League of Nations, Aleppo Rescue Home, Karen Jeppe, humanitarian assistance, Armenian women and genocide, eyewitness testimonies.

Forcible child transfer is one of the five genocidal acts listed in Article II of the Genocide Convention listed co-equally with acts of killing, causing serious bodily or mental harm, and measures to prevent births. Forcible child transfer

70 Տե՛ս N 1379-ի հարցաքննությունը:

71 Տե՛ս N 314-ի հարցաքննությունը:

72 Տե՛ս N 295, 608, 693, 749, 808, 846, 847, 848, 1008, 1021, 1027, 1048, 1099, 1111, 1316, 1336, 1364, 1405, 1421, 1436, 1437, 1480, 1793, 1804, 1839, 1848, 1874 հարցաքննությունները:

73 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ 16YR-6A028 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:



was part of the Armenian Genocide administered by the Turkish authorities.

This article deals with the issue of forced transfer of children and women during the Armenian Genocide. It presents the humanitarian efforts of the League of Nations to save the Armenians from Muslim captivity. To this end the League of Nations established a Commission of Enquiry with its headquarters in Aleppo and Constantinople.

The Aleppo Rescue Home was administered by the League of Nation Commissioner Karen Jeppe who saved Islamized Armenians from the French zone of occupation. In the League of Nations Archives 1464 individual surveys of the rescued Armenians are kept, from which 573 were girls and women. These are eyewitness testimonies that represent the policy of forced child transfer during the Armenian Genocide. The testimonies of these female inmates also represent and affirm the organizational pattern of the Armenian Genocide.

Резюме

## КАРЕН ЕППЕ И ДОМ СПАСЕНИЯ В АЛЕППО

В документах архива Лиги Наций

Эдита Г. Гзоян

**Ключевые слова** – Геноцид армян, насильственная передача детей, Лига наций, Дом спасения в Алеппо, Карен Йеппе, гуманитарная помощь, армянская женщина и геноцид, свидетельства очевидцев.

Насильственная передача детей является одной из пяти геноцидных действий, включённых, наряду с убийствами, причинением серьезных телесных повреждений или умственного расстройства и предумышленными мерами по предотвращению деторождения, во вторую статью Конвенции ООН о предупреждении преступления геноцида и наказании за него. Насильственная передача детей была частью осуществлённого турецкими властями Геноцида армян.

В статье рассматривается вопрос насильственной передачи детей и женщин во время Геноцида армян. Также представлены гуманитарная деятельность и усилия Лиги наций по спасению армян из турецкой неволи. Для этого Лига наций создала Комиссию по расследованию со штаб-квартирами в Алеппо и Константинополе.

Дом спасения в Алеппо находился под руководством комиссара Лиги наций Карен Еппе, которая спасла исламизированных армян из французской оккупационной зоны. В архивах Лиги наций хранятся 1464 анкеты спасённых армян, из которых 573 были девушки и женщины. Это свидетельства очевидцев, указывающих на политику насильственной передачи детей во время Геноцида армян. Показания этих женщин также подтверждают тот факт, что Геноцид армян был заранее спланирован и поэтапно осуществлён.